ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Լիա Հայրապետյան, առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիա, 20-24 մայիսի 2024թ.

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ (Joint Vienna Institute)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Նախատեսված էր կարճաժամկետ և երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ֆիսկալ ռիսկերի մոդելավորման և ֆիսկալ խոցելիության ցուցանիշների մակարդակի որոշման, ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ընկերությունների կենսունակության, ֆինանսկան վիճակի վերլուծության, ինչպես նաև ռիսկերի գնահատման և ախտորոշմանն ուղղված ժամանակակից մոդելների և գործիքակազմի կիրառման, նշված ուղղություններով միջազգային փորձի փոխանակման, փորձի ձեռք բերման, տեղայնացման ու կիրառման նպատակներով:

5. Քննարկված թեմաները.

Վերապատրաստման դասընթացի ընթացում քննարկվել են հետևյալ թեմաները.

- համակարգային ռիսկերի վերլուծություն և ֆինանսական կայունության գնահատումներ,
- համակարգային ռիսկերի մշտադիտարկման գործիքները,
- համակարգային ռիսկերի վերլուծության սցենարների ընտրություն,
- համակարգային ռիսկեր առաջացնող նոր դերակատարները (արհեստական բանականության՝ AI, կրիպտո, կլիմայական, կիբեր և համաճարակային ռիսկեր),
- անդրադարձ է կատարվել վարկային ռիսկի, իրացվելիության և տոկոսատրույքի ռիսկերի վերլուծությունների մեթոդաբանությանը և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսումնասիրվել և քննարկվել է որոշ երկրների ֆինանսական կայունության զեկույցները, վեր է հանվել վերջինների դրական և բացասական կողմերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չկան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տվյալ պահին ընթացք տալու առաջարկություններ առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

29.05.2024թ.